Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԲԱԳՐԱՏ ԽԱԼԱԹԵԱՆՑ

# ՄԻ ԿԱՐԾԻՔ

## ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

(Արտատպած «Բանասէր»ից)

ՓԱՐԻՍ

1902

9(47.925)
Խ-17

## ՄԻ ԿԱՐԾԻՔ

# ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

## ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ներկայ յօդուածս կարդացուած է Բեռլինի Vorderasiatische Gesellschaft Ընկերութեան Մայիսի 2, 1902 Թ. նիստում եւ կազմում է հեղինակի աւելի ընդարձակ աշխատութեան՝ «Հետքեր հնագոյն հայոց պատմութեան» մի մասը)։

Գիտութեանց սքանչելի ծաղկման հետ XIX դարում մարդս՝ կախարդի նման՝ Թափանցեց բնութեան գաղտնիքները, մերկացրեց նորանում Թաքնուած ոյժերը, նոցա իրան գործունէութեան օգնակից հրաւիրեց. նորա կախարդական գաւազանի առջեւ անգամ քարերը լեզուեցան. այն, ինչ որ շարունակ հազարաւոր տարիներ հողի եւ մոխրի տակ էր Թաղուած, դարձեալ կենդանութիւն, լեզու եւ միտք ստացաւ, բաց արեց մեր առջեւ ալեւոր հնութեան մոռացուած կեանքը։ Նեղոսի ափերից մինչեւ Տօրոսի լեռները կրկին գլուխ բարձրացրեց գոռոզ Արեւելքը իւր կորուսած փառքով. հնութեան փոշու տակից, փտած դագաղներից, պիրամիդների մԹին խորշերից, հոյակապ տաճարներից յարութիւն առան նոր նոր ազգեր, որոնք իրանց կուլտուրայի յիշատակներով բոլորովին նոր լոյս սփռեցին պատմութեան առաջին էջերի վերայ։ Յաւիտենական կորստից փրկեցաւ Սումեր եւ Ակկադ տէրութեան անունը, եւ նորանում ապրող ցեղը իրան արդարացի դատ պահանջեց պատմութեան բեմի առջեւ, իբրեւ կուլտուրայի հնագոյն ներկայացուցիչը Արեւելքում. նորա դարեւոր գործունէութեան յիշատակը ապրում է ոչ միայն բեւեռագրի, որ ապա Ասուրացիք ժառանգեցին, այլ եւ այն մեծաքանակ աշխարհայեցողութեան մէջ, որ անցնելով ազգէ ազգ, ցեղէ ցեղ, իրան նուաճեց ամբողջ հին աշխարհը։

Հիւսիսում, Հայաստանի աւերակների տակից կրկին կենդանութիւն ստացաւ մի ազգ, որի մասին պատմութիւնը բնաւ ոչինչ յայտնի չէր

06.05.2013



մինչեւ մեր օրերը · նորա անունն մեզ չէ հասել · իսկ երկիրն՝ ասուրական նշանագրերն եւ Աստուածաշունչը անւանում են Ուրարտու ։ Բազմաթիւ բեւեռագրերը, որ այստեղ գտնուած են, ապացոյց են, որ այս երկիրը մի ժամանակ Սումեր եւ Աքքադի հետ կուլտուրական կապ է ունեցել ։ Արժանի է ուշադրութեան այն հանգամանքն, որ Ուրարտուի թագաւորաց յիշատակարանները բնաւ եւ ոչ մի անգամ չեն կոչում երկիրը այս անունով, այլ միշտ գործ են ածում Բիայնաս անունն, որի տակ պէտք է Վանայ ծովի արեւելեան ափը Տուշպայ (Տոսպ) մայրաքաղաքի հետ հանդերձ հասկանալ ։ Երկրի գլխաւոր չաստուածներն էին՝ Խալդիս, Արդինիս (Արեւն) եւ Տէյիսբաս (Փոթորիկը) · ապա այս երրորդութեանն հետեւում էր փոքր չաստուածոց մի ստուար խումբ, որոնք նման Հելլենացոց «դայմոններին» (οἱ δαίμονες) զանազան քաղաքների եւ երկրների պաշտպան էին հանդիսանում ։ Նոցա շարքում աչքի է խփում (գետ) Arazas = Արազաս, որ հաւանօրէն սերտ կապ ունի Արաքս՝ ժողովրդական Արազ գետի հետ ։ Բայց ցաւօք Վանայ թագաւորաց յիշատակարանները, որ ասուրականների նման են հիւսուած, չափազանց միակողմանի են հանդիսանում, տեղեկացնելով միայն նոցա արշաւանաց եւ յաղթութեանց մասին եւ բնաւ չշօշափելով երկրի ներքին կեանքը ։

Շնորհիւ իւր դիւրին աշխարհագրական դրութեան եւ իւր թագաւորաց ձեռնարկող ոգուն, Ուրարտուն շուտով տարածեց իւր քաղաքական ազդեցութիւնն գրեթէ բոլոր հարեւան ազգերի վերայ եւ նոյն իսկ խրոխտ Ասորեստանին վտանգաւոր ախոյեան հանդիսացաւ ։ Կար ժամանակ, երբ նա, տարածւելով Վանայ ծովի ափերից մինչեւ Կապպադովկիա, Ասորիք եւ Միջագետք, անգամ յարձակողական գիրք բռնեց դէպի իւր հակառակորդը, ձգնելով խլել նորանից համաշխարհային տէրութեան գերը ։ Արգիշտիս Ա.-ի (Ը դար) Վանայ ժայռի վերայ փորագրած արձանագրութիւնն թւելով նորա անթիւ արշաւանքները, համաշխարհային դրականութեան յիշատակներից միայն Դարեհ Վշտասպի (521-485) արձանագրութեան կողքին կարող է դրւել ։ Առաւել եւս սպառնալի գիրք բռնեց Ռուսաս (Ուրսա) Ա., որ իրան արժանի հակառակորդ գտաւ Սարգոնի (722-705) մէջ ։ Վերջինս լաւ հասկացաւ այն վտանգն, որ հիւսիսից էր սպառնում, եւ վճռեց ընդ միշտ նորա առաջն առնել · ինքն իւր զօրքերի գլուխն անցած, նա մտաւ Հայաստանի լեռները եւ ուղղեց իւր զէնքը նախ եւ առաջ այն իշխանների դէմ, որոնք Ռուսասի հովանաւորութեան տակ էին մտած ։ Ուրարտուն յաղթւեցաւ, նորա սահմաններն կրճատեցան, նիզակակիցները թափուր եղան, ինքն Ռուսաս, չկամենալով տանել իւր պարտութիւնը, իրան կեանքին վերջ դրեց ։ Բայց եւ այնպէս երկիրը դեռ մի քանի տասնեակ տարի եւս պահպանեց իւր անկախութիւնն, եւ միայն նոր ազգերի հեղեղատը, որ դուրս վխժեց Ասիայի խորքերից, ընդ միշտ կործանեց այս հսկայ



տէրութիւնը, նորա բեկորների տակ թաղելով նորա վաղեմի փառքը (*) ։

Նորեկները Կիմմերներն եւ կամ՝ ըստ ասուրական աղբիւրների՝ Գամմարներն էին, որոնք պէտք է պատկանէին հնդ-եւրոպական ազգերի այն մեծ գաղթականութեանը, որ գրեթէ նոյն այս ժամանակ Ասիայից անցաւ հարաւային Ռուսաստանի տափարակները եւ՝ Սեւ ծովի հիւսիսային ափերը չափելով՝ մտաւ Բալկանեան թերակղզին ։ Այստեղից Իտալները բաժանւեցին եւ Պօ գետի ափերով իջան Իտալիոյ ընդարձակ հովիտները, իսկ Հելլէններն՝ Ելլադայի կանաչազարդ դաշտերը ։ Կիմմերները Հայաստան մտնելու համար իրանց առջեւ ունէին երկու ճանապարհ՝ նոքա կամ պէտք է ճեղքէին Կովկասեան լեռնաշղթան եւ այժմեան ռազմավիրական կիրճով Ուրարտու երկիրը թափանցէին, որ ազգերի մեծ գրոհակների համար քիչ յարմարութիւն էր ներկայացնում, եւ կամ թէ նոքա պէտք է Բալկանեան թերակղզուց անցնէին Բոսֆոր եւ այստեղից Կապպադովկիայի վերայով Վանայ տէրութեան սահմաններն մտնէին ։ Ահաւասիկ այն կարծիքը, որ տիրապետում է այժմս գիտութեան մէջ այս խնդրի մասին · բայց այստեղ հնարաւոր է եւ երրորդ ենթադրութիւն, այն է՝ Փոքր Ասիա մտնողները կարող էին իրանց ճանապարհ ընտրել Կասպից ծովի հարաւային ափերը, որտեղ նոքա ամենաnewel խոչնդոտների պիտի հանդիպէին · «հեռաւոր Մեդիան» (ինչպէս կոչում են այս երկիրը ասուրական աղբիւրները) այն ժամանակ ներկա-

---

(*) Առաջ եմ բերում այստեղ Ուրարտացւոց եւ նոցա ժամանակակից Ասուրացւոց թագաւորաց ցուցակը ։

| Ուրարտու | Ասորեստան |
| --- | --- |
| 1 · Արամէ<br>Պակասորդ ·<br>2 · Սարդուրի (Սեդուրի) որդի Լուտիպրիսի | Սաղմանասար Բ · 860-825 · |
| 3 · Իշպուինիս (Ուշպինա) | Շամշի Ռամման Բ · 825-812 |
| 4 · Մենուաս (նորա որդին)<br>5 · Արգիշտիս Ա · (») | Սաղմանասար Գ · 783-773 · |
| 6 · Սարդուրի Բ · | Տիգլատ Պալասար Գ · 745-727 |
| 7 · Ռուսաս (Ուրսա) Ա. | Սարգոն 722-705 |
| 8 · Արգիշտիս Բ · | |
| 9 · Ռուսաս Բ · | |
| 10 · Երիմենաս<br>11 · Ռուսաս Գ · | Ասարհադդոն 680-668 · |
| 12 · Սարդուրի Գ · (Կիմմերների արշաւանքը) | Ասուրբանիպալ 668-626 · |

յացնում էր մի շարք փոքրիկ, մասամբ Ասորեստանին հպատակ իշխանութիւններ, որոնք անընդունակ էին լուրջ դիմադրութիւն ցոյց տալու։ Միակ խոչնդոտն էր, այսպիսով, Ուրարտուն, որի աւերակների վերայ նստան նորեկները։

Այստեղ տեղի ունեցաւ նոյն երեւոյթը, որ մի քանի տասնեակ տարի յետ ի կորուստ տարաւ Ասորեստանը, երբ նա չորս կողմից շրջապատեցաւ քաղդէական ցեղերով, եւ ապա շուտով քաղդէական Բաբելոնը իւր գլուխն խոնարհեցրեց պարսից աշխարհակալի զէնքի առջեւ։ Նոյն վիճակին հանդիպեցաւ եւ Հռովմը, որի համաշխարհային զօրութիւնը ջլատեցին գերմանական գրոհակները։

Այսպիսով Փոքր Ասիոյ քաղաքական քարտէզը միանգամայն փոխուեցաւ. մինչեւ այժմ էլ շատերը այն կարծիքին են, որ Կիմմերների հետ եկան եւ այլ հնդ-եւրոպական ազգեր, ի թիւս որոց եւ Հայերը (?), որոնք գրաւեցին Վանայ տէրութիւնը։ Ի՞նչ եղան Ուրարտացիք. արդեօք գաղթեցի՞ն դէպի հիւսիս եւ ամրացան Կովկասեան անմատոյց լեռներում, ինչպէս Բասկերը Իսպանիայում, թէ եկւորների հետ խառնուեցան՝ պատմութիւնն դորա մասին լռում է։ Ցամենայն դէպս յաղթողները իրանք, իբրեւ կիսավայրենի ազգ, պէտք է տեղական կուլտուրայի ազդեցութեանն ենթարկուէին, որ շարունակ դարեր իշխում էր ամբողջ առաջաւոր Ասիայում։ Թէ բեւեռագիրը գործածութիւնից դուրս ելաւ՝ դիւրին է բացատրել նորանով, որ գրութեան այս ձեւը միայն ուրարտական գիտնականաց էր ծանօթ. բացի այդ, նորա բարդութիւնը հազիւ թէ կարողանար հրապուրել նորեկներին՝ գործադրել նորան իրանց լեզուի հարուստ հնչիւնները արտայայտելու համար։ Ահա՛ թէ ինչու մի քանի դար շարունակ երկիրը մնում է յունաց գրականութեան ազդեցութեան տակ մինչեւ Ե. դարը, երբ հայ այբուբենն է յօրինւում։

Այստեղ ինքն ըստ ինքեան հարց է ծագում՝ Վանայ բեւեռագրերի լեզուն արդեօք ժողովրդակա՞ն թէ պաշտօնական էր, (ինչպէս օրինակ Ասորեստանում, որտեղ ժողովուրդն խօսում էր արամէական լեզուով). քանի դեռ այս խնդիրը բաց է մնում, դժար է առ այժմ դատել երկրի բնիկների ցեղական ծագման մասին։ Ցամենայն դէպս նոցա հետ այժմ խառնուեցաւ մի հնդ-եւրոպական ազգ, որ իւր հետ բերեց լեզուի եւ կրօնի նոր պաշար։ Այժմ երկու ազգերի ապագան սերտ կապուած էր, անցան եւ մի քանի դարեր՝ ձուլեցան եւ նոցա լեզուները։

Բնաւ զուրկ լինելով որ եւ է աղբիւրներից, մենք անկարող ենք հետեւել այն քաղաքական եւ հոգեւոր պրոցեսներին, որոնք երկրի ցիր ցան մասերը միացրին հայոց Թագաւորաց իշխանութեան ներքոյ։ Մովսէս Խորենացու հնագոյն տեղեկութիւնները Հայկազեան հարստութեան մասին աւելի առասպելական, քան պատմական բնաւորութիւն



են կրում։ Այս խաւարը սկսում է սակաւ առ սակաւ փարատիլ, երբ Հայաստանի մէջ հիմնւում է Արշակունեաց հարստութիւնը (150 Ն. Ք.). այս ժամանակից սկսած մեր պատմութեան աղբիւրները աւելի առատ են հոսում, որոնց հետ միանում են յունաց եւ հռովմայեցւոց պատմագրերի տեղեկութիւններն եւս։ Հայոց պատմութեան համար բացւում էր մի նոր դարաշրջան, երբ երկիրը, ներքին խռովութիւններից յետոյ, վերջապէս մտաւ մի ամբողջ իշխանութեան տակ. թագաւորողը Վաղարշակն էր, պարսից Արշակ Մեծի եղբայրը։ Ըստ Սեբէոսի, երբ Վաղարշակ մտաւ Հայաստան, նորան հանդէպ ելաւ Բագարատ Փարազեան մեծ նախարարը իւր զօրքով, նորա գլուխը դրեց իւր հայրերի թագը եւ նստացրեց նորան ոսկեհուռ, ականակուռ գահի վերայ։ Հետաքրքիր է այս տեղեկութիւնը նորանով, որ՝ ըստ այնմ՝ երկիրը մի ժամանակ ունեցել է իւր բնիկ թագաւորները. բայց առաւել հետաքրքիր է հայ նախարարների այն ազդու դերը, որ այսուհետ սակաւ առ սակաւ պարզւում է պատմութեան ընթացքում։

Արդեօք ի՞նչ հիման վերայ էր հաստատուած նոցա իշխանութիւնը, աւանդակա՞ն էր թէ ժամանակաւոր, ժողովրդից ճանաչուա՞ծ թէ արքայապարգեւ կամ ինքնակոչ։ Բայց նախ քան այս հարցը հանդէս բերելն աւելորդ չեմ համարում մի թեթեւ ակնարկ անել Հայաստանի ներքին քաղաքական դրութեան Արշակունեաց ժամանակ։

ա. Տանուտէր'ի (tnuā եւ tēr) իշխանութիւնը, որպէս եւ

բ. Նահապետ'ինը (naha = առաջին եւ pets = գլուխ) հայ ժողովրդի ամենահին հաստատութիւնները պէտք է համարել, որոնք ցեղական կեանքի (Familienordnung) հողի վերայ պէտք է աճած եւ զարգացած լինին. թէ ո՞րն է դոցանից հնագոյնը՝ դժար է որոշել. հետաքրքիրն այն է, որ տանուտէրի իշխանութիւնը մինչեւ այժմս էլ գոյութիւն ունի մեր ժողովրդի մէջ, իբրեւ giułapetsh. վերջինս այլապէս կոչւում է եւս ռէս, որ համանօրէն ասուրական (եւս ասօրերէն) rešu = ռէշու = գլուխ բառից սերուած լինի։ (Համմտ. ասուրական reš ummânu = զօր-ա-գլուխ)։

գ. Ասպետ'ը (սանսկրիտ. aśva = ձի եւ pets = գլուխ) այրուձիոյ հրամանատարն էր հանդիսանում. ամբողջ հայ զօրագնդի առաջնորդը կոչւում էր սովորաբար

դ. Սպարապետ կամ

ե. Զօրավար։

զ. Սեպուհ. առաւել մութ է մեզ համար սեպուհների տեղը, որոնք Հայաստանի խոշոր կալուածատէրերի դասակարգն էին կազմում. յամենայն դէպս նոքա եւս իրանց հողի վերայ որոշ քաղաքական իրաւունքների տէր էին։ Գաւառների կառավարողները կոչւում էին առհասարակ

Է. Իշխանք. Գուցէ այս լեզուագիտօրէն անմեկնելի բառը պէտք է ասուրական šaknu (շակնու) = քաղաքապետ բառի հետ համեմատել. այս դէպքում պէտք է ընդունել, որ այս իշխանութիւնը ասուր-բաբելական կուլտուրայի ազդեցութեան ներքոյ է հայ հողի վերայ աճել եւ շնորհիւ յայտնի քաղաքական պայմանների այստեղ աւելի ընդարձակ նշանակութիւն ստացել (1)։

Ը. Նախարար. Արդէն մեր պատմագիրները իրանք այս իշխաններից զատում են նախարա'րներին, որոնք ծայրագոյն քաղաքական իրաւունքներով էին օժտուած։

Ո՞վքեր էին այս նախարարները եւ ո՞ւստից էին սերում իրանց։ Առաջին հարցը մեծ դժարութիւնների չի հանդիպում, 'ի նկատի առնելով այն հարուստ պաշարը, որ մեր պատմագիրները Դ. դարուց սկսած մեզ մատակարարում են։ Նախարարները մեր ամբողջ պատմութեան ընթացքում թագաւորի հպատակ (vassale) իշխաններ են հանդիսանում, որոնք առանձին, իրանց ժառանգաւոր գաւառներ էին կառավարում, ունէին իրանց սեպհական զօրքերը եւ թագաւորի կոչին հնազանդ համախմբում էին իրանց ոյժերը ընդհանուր թշնամու դէմ. անիշխանութեան ժամանակ (ինչպէս Ե. դարում) նոքա ամբողջ ազգի գլուխը անցած՝ մերթ արեւելեան, մերթ արեւմտեան հարեւանների յարձակումներին են յետ մղում. նոյն ազգային կռիւը նոքա եւ արաբացիների դէմ են դարձնում (Է, Ը, Թ դարերում), որ եւ Բագրատունիների գահակալութեամբ պսակւեցաւ (885)։ Նախարարներից ոմանք, ինչպէս՝ Բագրատունիք, Արծրունիք, եւ Մամիկոնեանք, առանձին պատուաւոր տեղ էին բռնած միւսների շարքում. առաջինները անգամ բացառիկ իրաւունք էին վայելում՝ Արշակունիների գլուխը թագով պըսակել։ Ի սկզբանէ անկասկած նախարարական պատիւը (եւ նորա հետ անքակ իշխանութիւնը) ժառանգական էր, բայց ապա նա շնորհւում էր արքայից հաւատարիմ ծառայութեան համար եւս. այս հիման վերայ հաւանօրէն ծագած են մեր նախարարութեանց երկու դասակարգը՝ աւագ նախարարների, որոց մէջ պէտք է հնագոյն, ցեղական իշխաններին տեսնել, եւ կրտսերների, որոնք իրանց տիրոջ ողորմութեամբ էին մեծարուած։ Արքայական սեղանի ժամանակ նոքա՝ ի նշան առանձին պատւոյ՝ իրաւունք ունէին թեք ընկնել բարձերի վերայ, աւագութեան կարգն իրանց մէջ պահելով. նա, որ իւր պետի դժգոհութիւնը իւր

(1) Թէ որչափ մօտ շփում են ունեցել Հայերը ասուրացիների հետ, ապացուցանում են մի շարք ասուրական բառեր, թէ՛ մեր գրաբառում եւ թէ աշխարհաբառում. օրինակ՝ birîtu = բերդ, kunûkku = կնիք, tinûru = թոնիր, qûbu = գուբ, kammachu = կմախ-ք, rešu = ռէս, šaknu = իշխան, qu, qummu = քո, քումմէ, patâru = պատառել, šapâru = ա-ճա-պար-ել (շափար), եւ այլն եւ այլն։



դէմ էր գրգռում, շատ անգամ զրկւում էր իւր պատւից. այն ժամանակ նորան մնում էր միայն զէնքը ձեռին իւր իրաւունքները պաշտպանել։ Սոյնօրինակ ապստամբութիւններ յաճախ քաղաքացիական պատերազմների բնաւորութիւն էին ստանում։ Ամբողջ հայոց պատմութեան ընթացքում նկատելի է մի խուլ, բայց անընդհատ կռիւ, որ նախարարները իրանց պետերի դէմ են մղում եւ որի բաղդը մերթ այս, մերթ այն կողմն է թեքւում. այս ժառանգաւոր իշխանները, որոնց անունն էին կրում Հայաստանի շատ գաւառները, յայտնապէս սովոր էին իրանց՝ իբրեւ երկրի բնիկ տէրերի վերայ նայել, իսկ թագաւորին՝ իբրեւ բռնակալ ճանաչել։ Ահաւասիկ սորանում, ըստ երեւոյթին, խորը պատմական ճշմարտութիւն է թագնուած. մի կողմից այլազգի պարսից հարստութիւնը ճգնում էր մերթ ողորմութեամբ եւ մերթ զէնքի զօրութեամբ տեղական իշխանների յամառութիւնը ջլատել եւ երկրում իւր լիազօր իշխանութիւնը հաստատել, միւսից՝ նախարարները բնաւ չէին կարող մոռանալ երկրի անկախ տէրերի այն պատուաւոր դերը, որ նոքա հնուց ի վեր խաղացել են իրանց բնիկ ժողովրդի մէջ։

Ո՞րտեղ է ուրեմն պտրելու նոցա պատւոյ եւ իրաւանց սկզբնական աղբիւրը։

Այստեղ մենք պէտք է կրկին յետ դառնանք եւ աշխատենք պարզել երկրի քաղաքական դրութիւնը, նախ քան Արշակունեաց հարստութիւնը այստեղ ոտք դրեց։ Ընաւ չկասկածելով Մ. Խորենացու Ա. գրքի նշանակութեան՝ իբրեւ ազգային աւանդութեանց գանձարանի մասին, մենք ցաւօք չենք կարող նորան պատմական յիշատակարանաց շարքը դնել. այստեղ մեզ օգնութեան են գալիս երկու այլ աղբիւրներ՝ ա. ասուրացւոց եւ բ. ուրարտացւոց թագաւորների յիշատակարանները։ Զննելով այն ճոխ ազգագրական պաշարին, որ նոքա իրանց մէջ պարունակում են, սակայն մենք շատ անգամ անկարող ենք որոշել թէ զանազան ազգերի ցեղական ազգակցութիւնը եւ թէ այն երկրների դիրքը, որոնք նոքա գրաւած են։ Բայց այնու ամենայնիւ մեր հարցի նկատմամբ այստեղ աչքի են խփում մի քանի պատմական հետքեր, որ վերին աստիճանի հետաքրքիր լոյս են սփռում նորա վերայ։

Սկսեմ Վանայ արձանագրութիւններից։

Ուրարտուի թագաւորաց յիշատակարանները, մի առ մի թւելով նոցա արշաւանքները մի շարք երկրների եւ քաղաքների վերայ, սոցա անուններին սովորաբար ni վերջաւորութիւնն են կցում, որ երբեմն âni (Bab-âni, Man-âni), երբեմն îni (Eria-îni, Urme-îni), երբեմն ûni (Tarihu-ûni, Bust-ûni) է հնչում։ Այս վերջաւորութիւնն իւր երեք ձեւերով պէտք է ուրարտացւոց լեզւի սեպհականութիւնն համարել, քանի որ նա կցւում է եւ այն երկրների եւ քաղաքների անւանց, որոնք Վանայ իշխանութեան սահմաններից հեռու են գտնւում (Bustûni

= Parsua, Manâni = Man)· ni վերջաւորութիւնն ցոյց է տալիս ա- կամ სეპჰაკანუთიუნ (սեռական եզ.) և կամ բ. ბაზმუთიუნ (1) (ուղ. յոգն.), ինչպէս օրինակ վրացերէնում: Ժամանակի ընթացքում բոլոր այս երեք ձևերը, պէտք է ենթադրել, ձուլուել են և՝ հայերէնով უნი, երրորդ դ. უნი բայի ազդեցութեան ներքոյ ûni ձևով փոխանակուել: Այս ենթադրութիւնը կարծես ճշտւում է այն հետաքրքիր մեկնութեամբ, որը տալիս է Մ. Խորենացին մի քանի նախարարների անուանց· ըստ նորա բացատրութեան՝ Գնունի = գինի ունի («որ առաջի թագաւորին պատրաստէր ըմպելիսն»), Արծրունի = արծիւ ունի, Հաւնունի = հաւ ունի, Բազէակիր և այլն· հայ նախարարների անունները անհագին մեծամասնութեամբ կրում են այս უნი = uni վերջաւորութիւնն, որ անգամ զուտ հնդ-եւրոպական սեպհական անուանց հետ է միանում, օրին. Արշակ-უნი, Պահլաւ-უნი, Բագրատ-უნი և այլն: Գուցէ և մեր ժամանակակից (որպէս և մի քանի նախարարների) ազգանուանց ան վերջաւորութիւնը վերևում յիշած âni երկվանկի կարճառուն պէտք է համարել, թէպէտև ან հնչուն կարելի է նմանապէս պարսից յոգն. ուղ. an-ից սերել:

Ես վստահութիւն եմ առնում վերստ այստեղ հանդէս բերել մի ենթադրութիւն, ըստ որում հաւանօրէն նոյն կերպ պէտք է բացատրել հեռ οἱ Ἀρμένιοι, ասորերէն Արմնայէ, ارمني, Armni (Դարեհ Վշտասպեան) անունն, որ բաղկացած պէտք է լինի նոյն ni մասնիկից և [illegible] (2) = Ա ր ա մ է՝ Ուրարտուի առաջին թագաւորի անունից: Այսպիսով Arame-ni կամ կրճատած՝ Arme-ni, անգամ Arm-ni (Դարեհ Վ.) կարող էր սկզբում նշանակել՝ Ա ր ա մ է՛ի հպատակները (եզ. սեռ.) և կամ Ա ր ա մ է՛ի սերունդը (յոգն. ուղ.): Մովսէս Խորենացու այս իշխանի մասին հաղորդած աւանդութիւնները որչափ էլ առասպելական թւան մեզ, բայց հազիւ թէ այժմ կասկած պէտք է յարուցանեն մեր մէջ, թէ իրօք նոքա հիմնուած են պատուական սերմի վերայ, որ՝ դարեր ի վեր աճելով ժողովրդի յիշողութեան մէջ, իւր գոյնզգոյն բողբոջներն է ածել· «Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտիք նահատակութեան, և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց· յորոյ անուն և ամենայն ազգք· զաշխարհս մեր անուանեն, որպէս Յոյնք՝ Արմէն, և Պարսիկք և Ասորիք՝ Արմինիք...» (3) պարծանօք չարում է այս տողերը մեր պատմագիրը և ապա առաջ բերում նորա գործած չահատակութիւններից երեքը· Արամ յաղթում է Նիւքար Մադէսին, Մեդացւոց առաջնորդին, որին կախում է Արմաւրի աշտարակից, արտաքսում երկրից մի ամն տիտանեան Պայապիս Քաղեայ բնակային, անգամ

(1) Պրոֆ. Sayce ընդունում է միայն առաջինը:
(2) Salmanassar, der schwarze Obelisk, 44,86.
(3) Մովսէս Խորենացի Ա, գլ. ժբ:



ասպնում ասորեստանցի չաստուած Բարշամ սկային· «Բազում և այլ գործ քաջութեան ի սմանէ գտանին կատարեալ, այլ մեզ բաւական լիցի ասացեալս» (1) աւելացնում է նա, ըստ իւր սովորութեան չափաւորելով իւր խօսքը:

Սակայն ես չ'կամիմ միմիայն զուտ լեզուագիտական համեմատութիւններով չատանալ, այլ առաջ կ'բերեմ մի քանի հայ նախարարական ցեղերի անուններ, որոնց հնագոյն հետքերը Ուրարտուի պատմութեան մէջ են դրոշմած:

1. Ա պ ա հ ո ւ ն ի-ք. այս նախարարութիւնն, ինչպէս յայտնի է, գտնւում էր Վանայ ծովի արևմտեան կողմը· նոյն գաւառի անունն A-ba-e-ni ձևով հանդէս է գալիս Նաիրի երկրի 23 իշխանութեանց չարքում, որոնց տէրերը հանդէպ ելան Տիգլաթ Պալասսար Ա.-ին, երբ սա 1100 թ. ն. Ք. արշաւեց դէպի հիւսիս· սա ասուրական թագաւորների առաջին մարտն էր Հայաստանի հետ, որ աջողութեամբ պսակւեցաւ:

2. Ա ր ծ ր ո ւ ն ի-ք մեր ամենահին և ընդարձակ նախարարութիւններից մէկն է, որ գրաւած էր գրեթէ ամբողջ Վասպուրականը· գլխաւոր քաղաքն էր Վան (Տոսպ): Մհեր-Կապուսի (Վանայ կամ Շամիրամ քար) կոչւած արձանագրութիւնն, թւելով ինչ ինչ քաղաքների անուններ, որոնց չաստուածոց նշանակւած էին զոհելի անասուններ, ի միջի այլոց անուանում է և Ar-tsu-hu-i-ni (2), այլապէս՝ Ar-tsu-ni-hu-i-ni (3) = Ար-ծ(ր)ու-հու-ի նի քաղաքը, որ բառացի կ'նշանակէ՝ «Ար-ծ(ր)ու-ն(եաց ցեղին) պատկանող քաղաք»: Թէ ինչ պատմական անցքեր ւած են այս երկրի վիճակը Արծրունեաց ձեռքը և թէ ինչ դեր են խաղացել նոքա հնումն՝ մեզ առ այժմ յայտնի չէ:

3. Ռ շ տ ո ւ ն ի-ք. այս նախարարութեանն էր պատկանում Վասպուրականի գաւառներից մէկը, որ նոյն անւամբ էր մկրտւած (Վանայ ծովի արևելեան ափին)· իցէ ճշմարտութիւնից մենք հեռու չենք լինի, եթէ այս անւան մէջ Ռ ո ւ ս ա ս ուրարտական թագաւորանունը պտրենք· յայտնի է, որ մինչև այսօր էլ Վանայ նահանգի բնակիչք իրանց Վ ո չ-իկ են անւանում, որ աւելի եւս մօտ է յիշեցնում նոյն Վանայ պետերի անունն և միանգամայն համապատասխանում ասուրական աղբիւրների Ursa (Ուրսա)-ին:

4. Ե ր մ ա ն թ ո ւ ն ի-ք. այս անունն եւս, որ ոչ մի լեզուագիտական մեկնութիւններով չի պարզւում, ես համեմատում եմ Ե ր ի մ ե- ն ա ս՝ 10-րդ ուրարտ. թագաւորի անւան հետ:

5. Մ ա ն ա ւ ա զ ե ա ն. եթէ ճիշտ է Խորենացու տեղեկութիւնը, որ դեռ Արշակունիներից առաջ Հարք գաւառում բնակում էր Մ ա ն ա-

(1) Նոյնտեղ, գլ. ժդ:
(2) Schulz (Journal Asiatique) XVII, 15:
(3) S. M. Rassam.

ւագեան նախարարական ցեղը (1), որ ապա Տրդատի մահից յետ իսպառ ջնջւեցաւ, հաւանական է սերել այս անունը Մենուա՛ից (Իշպուինի որդուց), որի յիշատակը ցայսօր եւս ապրում է նոյն իսկ Մանաւազակերտի անուան մէջ (Վանայ ծովից հիւսիս)։

6. Տրունի ես կը համեմատեմ Tar-i-hu-ni գաւառի անուան հետ, որ հաւանօրէն Վանայ ծովից հիւսիս-արեւմուտք էր գտնւում. Sayce-ի մեկնութիւնը «հզօր երկիր» (taraje = «հզօր» ածականից) ըստ իս սակաւ հիմք ունի։

7. Սահառունի հմմտ. Su-ra-hu-e, որ Վանայ տէրութեան գաւառներից մէկն էր կազմում։

8. Վարձաւունի մօտ յիշեցնում է մեզ U-bar-si-u-ni երկրի անունն, որ նոյն Տիգլաթ Պալասար Ա. Նաիրի 23 իշխանութեանց շարքումն է դնում. Նոյն անունն տալիս է մեզ եւ Արգիշտիի յիշատակարաններից մէկը A-bar-si-u-ni ձեւով։ Այս իշխանութիւնն երեւի Վանայ ծովից հիւսիս պէտք է որոնել։

9. Պալունի պէտք է համեմատել Pa-la-i-ni երկրի անուան հետ, որ Sayce հազիւ թէ իրաւամբ Վրաստանում է պտրում։

10. Խոռխոռունիք իցէ եկած լինէին Charchar (Խառխառ)՛ից, որ տարածւում էր Ուրմիայ ծովից հարաւ։

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, 10 հայ նախարարութիւններ, որոնցից չորսը՝ Արծրունիք, Ռշտունիք, Ապահունիք եւ Խոռխոռունիք պատուաւոր տեղ են բռնած մեր պատմութեան մէջ, պատկանում են ալեւոր հնութեան։ Այստեղ ինքն ըստ ինքեան հարց է ծագում, թէ արդեօք այս անունները, որ մեզ տալիս են ասուրական եւ ուրարտական յիշատակարանք, պատկանում էին ամեն մի գաւառի բոլո՞ր բնակչաց թէ միայն մի ցեղի, որ նոցա գլուխն էր կանգնած։ Տոհմական կեանքի տեսակէտից այս խնդրի լուծումը մեծ դժուարութիւնների չէր հանդիպի՝ սկզբնական ցեղապետի անունը հարկաւ տարածւում էր նորա ամբողջ ցեղի եւ ապա նոյն իսկ երկրի վերայ, որ նորա բազմացած սերունդը բռնած էր։ Թէ իրօք տոհմական կեանքը Հայերի մէջ եւս գոյութիւն ունէր՝ այդ մեզ ակներեւ է, ինչպէս նկատեցինք, նահապետի եւ տանուտէրի իշխանութիւնից։ Երկրի բնութիւնն ինքն արդէն նպաստում էր, որ այս ձեւի քաղաքական կեանքը, լեռների մէջ փակւած, երկար դարեր զարգանար. նախարարութիւնք հէնց այս նահապետական կեանքից պէտք իրանց սկիզբն առնէին, իբրեւ հնագոյն, օրինաւոր իշխանութեամբ օժտւած տոհմեր, որոնք ապագայում եւս շարունակում են դեռ իրանց գաւառների գլուխը կանգնել եւ մերթ իրանց իրաւունքները Արշակունիներից պաշտպանել, մերթ իրանց ոյժերը համախմբել օտարազգի արշաւանաց դէմ։ Այստեղից մեզ միանգամայն պարզւում է,

(1) Մ. Խորեն. Ա. գլ. ժբ։



թէ ինչու Վանայ թագաւորաց եւ ոչ մի արձանագրութիւնը չէ յիշատակում նոցա հպատակ ազգի անունն, որ բաժանւած էր բազմաթիւ մանր ցեղերի։ Ուրարտուի տէրութիւնն, չնայելով իւր հզօր քաղաքական աճմանն, երբէք հասած չէր ազգային միութեան գաղափարին, եւ այս հանգամանքն գլխաւոր պատճառներից մէկն էր, որ նորան ի կորուստ տարաւ։ Նոր ազգի հանդէս գալը Հայաստանի սահմաններում VII դ. հազիւ թէ հիմնովին փոխեց նորա քաղաքական քարտէզը. ընկաւ իսկապէս թագաւորի իշխանութիւնն, որ շարունակ 200 տարի աճելով՝ ծանր լուծ պէտք է լինէր տեղական ցեղապետների համար. իսկ առանձին իշխանների համար դժար չէր իրանց անկախութիւնն անմատոյց լեռներում պահպանել։ Նոցա շարքից անկասկած շատերը վերացան, որոնց յիշատակը գուցէ պէտք է պտրել այն քաղաքների եւ գեղերի անուանց մէջ, որոնցով առատ են ուրարտական թագաւորաց յիշատակարանները։ Նոցա տեղը գրաւեցին նորեկների առաջնորդները, որոնք հնագոյն, տեղական իշխանաց հետ միասին կազմեցին նախարարական դասը. այսուհետ նոցա ձեռքը անցաւ Հայաստանի վիճակը։

Բերլին, 2 Մայիսի 1902։

Гос. Публ. Библиотека
Գ 6447
41

## ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. *Տասնիններորդ դարի կտակը* (1899) . . գինն է 15 կոպ.
2. *Թըլոր-Դաւիթ եւ Մհեր* (1899) . . » 40 »
3. Obschtschij otscherk arminanskago bogatyrskago eposa (Jubilejny Zbornik v tschestj Vsev. Millera) (1900) . . . . —
4. Iranskije geroi v sredê armianskago naroda (Ottisk s XLV kn. «Ethnograph. Obozrenije»). —
5. *Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ* (1901) » 50 »
6. Das armenische Neldenepos. (Berlin, 1902) » 50 »
7. *Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին.* (*Պարիս*, 1902) . . . . » 50 »

*Տպագրութեան պատրաստ է «Հետքեր հնագոյն Հայոց պատմութեան».*

*Ցանկացողները դիմելու են՝*

Berlin. Charlottenburg, Friedbergstr. 31
Dr. B. Chalatianz.

ՀՀ Ազգային գրադարան
NL0393225

8856